ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. Ընդհանուր դրույթներ

«ԱՐՄԵՆԲՐՈԿ»-ը առաջարկում է մասնագիտացված խորհրդատվություն անհատներին, արտասահմանյան և տեղական ընկերություններին, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին, որոնք Հայաստանում և տարածաշրջանում ներդրումներ կատարելու հնարավորություններ են փնտրում:

Մեր գործունեությունը հիմնված է հսկայական փորձի և ֆինանսական շուկայի հիմնական հատվածների ուսումնասիրությունների վրա: Մեր հետազոտական թիմը կատարում է հետազոտություններ և մեր հաճախորդներին է տրամադրում Հայաստանի ֆինանսական շուկայի և արդյունաբերության բազմակողմանի վերլուծություններ և հաշվետվություններ: Մենք մեր արտասահմանյան հաճախորդների ուշադրությունը հրավիրում ենք Հայաստանի տնտեսական համակարգում կատարվող բոլոր նշանակալի փոփոխությունների վրա՝ կատարելով երկրի վերաբերյալ ամենաթարմ տնտեսական վերլուծություններ:

Խորհրդատվությունը մատուցվում է հետևյալ ոլորտների և հարցերի շուրջ

1. արժեթղթերում ներդրումների և արժեթղթերով գործարքների իրականացում,
2. ընկերության կապիտալի օպտիմալ կառուցվածքի ձևավորում,
3. կորպորատիվ ռազմավարության մշակում,
4. ընկերությունների վերակազմակերպում,
5. ֆինանսական վերլուծությունների իրականացում,
6. ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմում և տարածում

Այս ծառայությունների հետ կապված հարցերը կարգավորվում են ընկերության

1. խորհրդատվական ծառայությունների մատուցման կանոններով
2. ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով:

Խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ սպառիչ տեղեկություններ բոլոր ցանկացողները կարող են ստանալ զանգահարելով +37410 538700 հեռախոսահամարով:

2. Հաճախորդի կողմից վճարումներ կատարելու պայմանները, եղանակները, ժամկետները

Հաճախորդի կողմից վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների հարցում կիրառվում է ճկուն մեխանիզմ: Դրանք սահմանվում են հաճախորդի հետ բանակցությունների արդյունքում և ներառվում են նրա հետ կնքված պայմանագրում: Հաճախորդը վճարումները կարող է կատարել հետևյալ եղանակներից որևէ մեկով.

1. Վճարումը կատարվում է ծառայության մատուցման ավարտին,

2. Վճարումը կատարվումն է ծառայության մատուցման ընթացքում՝ կողմերի սահմանած ժամանակացույցով,

3. Վճարումը կատարվումն է ծառայության մատուցման ընթացքում՝ ըստ ծառայության ավարտվածության աստիճանի:

3. Հաճախորդի պատվերները և առանձնահատուկ ցուցումները ստանալու նպատակով հաճախորդի հետ կապի իրականացումը

Հաճախորդի պատվերները և առանձնահատուկ ցուցումները ստանալու նպատակով հաճախորդի հետ կապը իրականացվում է նրա (նրա ներկայացուցչի) հետ անմիջական շփման, հեռախոսի, էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի միջոցով:

Հաճախորդի հետ կապի իրականացման կոնկրետ միջոցները ներառվում են ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրում:

4. Պայմանագրերի ժամկետները և դրանց դադարեցումը

Պայմանագրերը կնքվում են ինչպես մեկ միանվագ ծառայության մատուցման համար, այնպես էլ երկար ժամկետով: Պայմանագիրը կարող է լինել նաև առանց ժամկետի նշման, որի դեպքում այն կգործի մինչև կողմերից մեկը կդադարեցնի: Ցանկացած դեպքում հաճախորդը կարող է ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը միակողմանիորեն լուծել՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Այդ դեպքում պայմանագիրը լուծելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդի միջոցները կվերադարձվեն հաճախորդին կամ նրա ներկայացուցչին:

5. Շահերի բախման քաղաքականությունը

Այն դեպքում, երբ մենք հիմնավոր փաստերի հիման վրա հանգում ենք այն եզրակացությանը, որ մեր ընկերության և հաճախորդի կամ տարբեր հաճախորդների միջև հաճախորդների պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաճախորդի պատվերի կատարման պահը, հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ: Եթե հաճախորդը հրաժարվում է օգտագործել մեր կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ ընկերության տարբեր հաճախորդների միջև, ապա հաճախորդների պատվերները կատարվում են ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Եթե շահերի բախումը առաջանում է մեր ընկերության և հաճախորդի միջև,

ապա Հաճախորդի պատվերը կատարվում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե հաճախորդը, այլ ընկերությունը:

6. Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Խորհրդատվության ծաեայություններից օգտվելու համար հաճախորդը պետք է ներկայացնի.

1. Անձը հաստատող փաստաթուղթ (ֆիզիկական անձի դեպքում):
2. Պետական գրանցումը հաստատող փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում):
3. Ցանկացած փաստաթուղթ, որը անհրաժեշտ կլինի ծառայությունը պատշաճ մակարդակով մատուցելու համար:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Խորհրդատվական ծառայությունների սպառման ռիսկը կրում է ինչպես «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն, այնպես էլ հաճախորդը: «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից ներկայացված ոչ ճշգրիտ տեղեկությունների հիման վրա տրված խորհուրդների կատարման արդյունքում հաճախորդի կրած վնասների համար: «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն պատասխանատվություն չի կրում նաև իր տված խորհուրդները հաճախորդի կողմից չկատարելու կամ մասամբ կատարելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար, սակայն պատասխանատվություն է կրում իր տված խորհուրդների կատարման հետևանքով հաճախորդի կրած վնասների համար